ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Սև ԱՎԱՋ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Եղեգնավան բնակավայրի վարչական տարածքում օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

Վեղի համայնք Եղեգնավան բնակավայր **03.11.2025 թ.**

2025 թ. հոկտեմբերի 31-ին, ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Եղեգնավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Եղեգնավան, Խանջյան 20/ տեղի ունեցավ «Սև ԱՎԱՋ» ՍՊ Ընկերության (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Եղեգնավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի /ավազակոպճագլաքար/ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին Վեղի համայնքի ավագանու անդամներ՝ Վահագն Վարդանյանը, Գեղամ Հովակիմյանը, Գալուստ Մանուկյանը, Հակոբ Թուրիկյանը, Ավետիս Ավետիսյանը, աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շամո Բաքոյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետներ՝ Սիմոն Կարապետյանը, Վահրամ Ծատուրյանը, «Սև ԱՎԱՋ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Մանվել Մարտիրոսյանը, ընկերության ներկայացուցիչները, ինչպես նաև Ընկերության փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, համայնքի բնակիչներ, ֆիզիկական անձինք, առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև վարչական տարածքի ներկայացուցիչներ:

Մասնակիցների ելույթները

Ելույթ ունեցավ Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շամո Բաքոյանը և հայտնեց, որ իրականացվում է «Սև ԱՎԱՋ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի Եղեգնավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի /ավազակոպճագլաքար/ երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ թվով 1-ին հանրային քննարկումը: Նշեց, որ հանրային քննարկման վերաբերյալ հանրային ծանուցումը սահմանված կարգով իրականացվել է:
Հաջորդիվ հայտարարեց, որ Վեղի համայնքի ղեկավարի կողմից քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շամո Բաքոյանը:

Վեղու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը ողջունեց բոլորին, ներկայացրեց աշխատակարգը և նշեց, որ քննարկվող հարցով առաջին հանդիպումն է, ըստ կարգի Ընկերության ներկայացուցիչները հանդես գան զեկույցով, այնուհետ կծավալեն քննարկումներ, ելույթներ և հարց ու պատասխան:

Խոսքով հանդես եկավ Ընկերության փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, վերջինս հայտնեց, որ «Սև ԱՎԱՋ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված է ՀՀ Արարատի մարզի Վեղի համայնքի

Եղեգնավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի՝/ավազակոպճազլաքար/ երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ թվով 1-ին հանրային քննարկում /1-ին լսում/: Հաջորդիվ հայտնեց, որ օրենքի պահանջներին համապատասխան դիտարկվել է ազդակիր համայնքը և բնակավայրը, որտեղ և իրականացվում է 1-ին հանրային քննարկումը: Ներկայացվեց նաև Ընկերության մտադրությունները և տեղեկություններ, մոտակա բնակավայրերի տվյալները և հեռավորությունը նախատեսվելիք հանքավայրից, աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունը, սոցիալական ծրագրերը:

Հաջորդիվ մտահոգությամբ հանդես եկավ Եղեգնավան բնակավայրի բնակիչ՝ Արմեն Ստեփանյանը. ակտիվ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ բեռնատարները խանգարում եմ ուղեկալից ներս մտնելուն և դուրս գալուն, արդյոք դա կկարգավորվի:

Հարցերին պատասխանեց Ընկերության փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, հայտնելով, որ քննարկման այս փուլը երկրաբանական հետազոտությունների թույլատվություն ստանալու փուլն է, իսկ եթե պաշարները հաստատվեն և լինի թույլատվություն հանքհավայրի շահագործման, կկազմվի Ընկերության մեքենաների մուտքի և ելքի գրաֆիկ:

Հաջորդիվ հարց հնչեցրեց Եղեգնավան բնակավայրի բնակիչ՝ Վարազդատ Գալոյանը.ինչու՞ մեկ այլ Ընկերության հանրային քննարկման ժամանակ հարց է հնչեցվել արդյոք տարածքում առկա են ՀՀ Կարմիր գրքի բուսատեսակներ և կենդանատեսակներ, իսկ այս լսմանը ինչու՞ չի բարձրացվում այդ հարցը և արդյոք լինելու է այլընտրանքային ճանապարհ:

Հարցերին պատասխանեց Ընկերության փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, հայտնելով, որ այս հանրային լսումը թվով 1-ինն է, կարգով սահմանված Ընկերությունը ներկայացնում է մտադրությունների մասին, համայնքի կողմից նախնական համաձայնություն ստանալու դեպքում ՇՄԱԳ հաշվետվության ժամանակ կներկայցվի տվյալ տարածքում առկա ՀՀ կարմիրգրքյան բուսատեսակները և կենդանատեսակները, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կօգտվեն նոր, այլընտրանքային ճանապարհից:

Հաջորդիվ ելույթով հանդես եկավ Եղեգնավան բնակավայրի բնակիչ՝Անանյա Սողոմոնյանը, նշելով, որ կողմ է հանքավայրի բացմանը, սակայն իրեն մտահոգում է բնակավայրի գերեզմանոց տանող ճանապարհի անբարվոք վիճակը, հնարավոր է բարեկարգել.

Հարցին պատասխանեց Ընկերության տնօրեն՝ Մանվել Մարտիրոսյանը, նշելով, որ կառուցելու են ճանապարհը և ոչ բարվոք կամուրջը:

Հաջորդիվ հարց հնչեցրեց Վեդի համայնքի ավագանի Գալուստ Մանուկյանը՝ նշելով հանքի շահագործումով արդյոք չի փոխվի Արաքս գետի հունը, խախտվելով պետական սահմանը:

Հարցերին պատասխանեց Ընկերության փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, հայտնելով, որ օրենքը հստակ սահմանում է գետի հունից մինչև արդյունահանվող տարածքը, այն պետք է կազմի 32.0 մետր:

Հաջորդիվ հարց հնչացրեց Վեդի համայնքի ավագանի Վահագն Վարդանյանը, որտեղ է գտնվում և որքան է հայցվող տարածքը:

Հարցերին պատասխանեց Ընկերության փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, հայտնելով, որ հաջորդ հանրային լսմանը կներկայացվի և հայցվող տարածքը և տեղադիրքը, երկրաբանական հետազոտությունից հետո:

Հաջորդիվ հարց հնչեցրեց Վեդի համայնքի ավագանի Ավետիս Ավետիսյանը, ցանկության դեպքում արդյոք Ես կարող եմ համահավասար իրավունքներով զբաղվել հանքարդյունահանմամբ:

Հարցերին պատասխանեց Ընկերության փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, հայտնելով, որ նույն եռանդով պատրաստ է, որպես փորձագետի նախաձեռնել հանրային քննարկում /լսում/:

Հաջորդիվ մտահոգություն հնչեցրեց Եղեգնավան բնակավայրի բնակիչ՝ Լևոն Աղաբեկյանը, հայտնելով, որ ունի անասնագլխաքանակ, չունեն արոտավայրեր և խոտհարքներ: Տարիներ առաջ այդ տարածքները եղել են և արոտավայր և խոտհարքներ:

Հարցին պատասխանեց Ընկերության տնօրեն՝ Մանվել Մարտիրոսյանը, նշելով, որ նախկինում այդ տարածքները ծառայել են, որպես արոտավայրեր, ժամանակի ընթացքում ծառատեսակները հատվել են, բուսածածկը քայքայման է ենթարկվել, այժմ ավազուտներ են:

Հաջորդիվ ելույթով հանդես եկավ Եղեգնավան բնակավայրի բնակիչ՝ Ռաֆիկ Սողոմոնյանը, հայտնելով իր գոհունակությունը նախաձեռնությանը, ողջունում է հանքավայրի բացումը, բնակիչները մատչելի, նույնիսկ անվճար ձեռք կբերեն ավազ, տնտեսություններում օգտագործելու նպատակով:

Հաջորդիվ ելույթով հանդես եկավ Այգավան բնակավայրի բնակիչ՝ Սոս Սերոբյանը՝ ողջունելով նախաձեռնությունը, հայտնելով, որ նոր աշխատատեղեր կբացվեն և դա օգուտ է բնակիչներին:

Հաջորդիվ ելույթով հանդես եկավ Եղեգնավան բնակավայրի բնակիչ՝ Ստեփան Սմբատյանը՝ ողջունելով նախաձեռնությունը, հայտնելով, որ պետք է միայն պահպանվեն բնապահպանական նորմաները:

Հաջորդիվ ելույթով հանդես եկավ Եղեգնավան բնակավայրի բնակիչ՝ Արմեն Խուդավերդյանը հայտնելով, որ կողմ է հանքավայրի բացմանը, անկախ այն բանից թե ով է լինելու սեփականատերը:

Հաջորդիվ հարց հնչեցրեց ազդակիր Եղեգնավան բնակավայրի վարչական ղեկավար՝ Դավիթ Մեհրաբյանը, արդյոք կան սոցիալական ծրագրեր բնակավայրի համար և ծանր բեռնատարների գերբեռնվածությունը և շարժը ինչպես եք կարգավորելու:

Հարցին պատասխանեց Ընկերության տնօրեն՝ Մանվել Մարտիրոսյանը, նշելով, որ կաջակցեն բնակավայրում գործող և դպրոցին և մանկապարտեզին: Կառուցելու են գերեզմաններ տանող ճանապարհը և ուղեկալի ներսում գործող կամուրջը:

Հաջորդիվ հարց հնչեցրեց Եղեգնավան բնակավայրի բնակիչ՝ Միքաել Համբարձումյանը, նշելով, որ ծանր գերբեռնված մեքենաների շարժից իրենց տան պատերի վրա ճաքեր են նկատվում, ինչպես են պատրաստվում կարգավորել մեքենաների գերբեռնվածությունը:

Հարցերին պատասխանեց Ընկերության փորձագետ՝ Զարուհի Զուտնաչյանը, հայտնելով, որ գերբեռնված մեքենաների նկատմամբ տուգանելու և գերբեռնվածությունը սահմանափակելու գործառույթը վերապահված է բնապահպանության տեսչությանը:

Հաջորդիվ նախագահողը հարց ուղղեց լսման մասնակիցներին, արդյոք կան հարցեր թե՛ ոչ:

Հաշվի առնելով, լսման մասնակիցների դիրքորոշումը հայտարարեց հանրային քննարկման ավարտ:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 3 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Վարող՝ Գյուղ. և Բնապահ. Բաժնի պետ՝ / Շ. Բաքոյան

Նախաձեռնող՝ «Սև ԱՎԱԶ» ՍՊԸ-ի տնօրեն՝ / Մ. Մարտիրոսյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«Սև ԱՎԱՋ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ. Արարատի մարզի Վեդի համայնքի Եղեգնավան բնակավայրի վարչական տարածքում գտնվող օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

Վեդի համայնք. Եղեգնավան բնակավայր **31.10.2025թ.**

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	
6.	[illegible]	[illegible]	
7.	[illegible]	[illegible]	
8.	[illegible]	[illegible]	
9.	[illegible]	[illegible]	
10.	[illegible]	[illegible]	
11.	[illegible]	[illegible]	
12.	[illegible]	[illegible]	
13.	[illegible]	[illegible]	
14.	[illegible]	[illegible]	
15.	[illegible]	[illegible]	
16.	[illegible]	[illegible]	
17.	[illegible]	[illegible]	
18.	[illegible]	[illegible]	
19.	[illegible]	[illegible]	
20.	[illegible]	[illegible]	
21.	[illegible]	[illegible]	

22.	[illegible]	[illegible]	
23.	[illegible]	[illegible]	
24.	[illegible]	[illegible]	
25.	[illegible]	[illegible]	
26.	[illegible]	[illegible]	
27.	[illegible]	[illegible]	
28.	[illegible]	[illegible]	
29.	[illegible]	[illegible]	
30.	[illegible]	[illegible]	
31.	[illegible]	[illegible]	
32.	[illegible]	[illegible]	
33.	[illegible]	[illegible]	
34.	[illegible]	[illegible]	
35.	[illegible]	[illegible]	
36.	[illegible]	[illegible]	
37.	[illegible]	[illegible]	
38.	[illegible]	[illegible]	
39.	[illegible]	[illegible]	
40.	[illegible]	[illegible]	
41.	[illegible]	[illegible]	
42.	[illegible]	[illegible]	
43.	[illegible]	[illegible]	
44.	[illegible]	[illegible]	
45.	[illegible]	[illegible]	
46.	[illegible]	[illegible]	
47.	[illegible]	[illegible]	
48.	[illegible]	[illegible]	
49.	[illegible]	[illegible]	
50.	[illegible]	[illegible]	

51.	[illegible]	[illegible]	[illegible]
52.	[illegible]	[illegible]	[illegible]
53.	[illegible]	[illegible]	[illegible]
54.	[illegible]	[illegible]	[illegible]
55.	[illegible]	[illegible]	[illegible]
56.	[illegible]	[illegible]	[illegible]
57.	[illegible]	— " —	[illegible]
58.	[illegible]	[illegible]	[illegible]
59.	[illegible]	[illegible]	[illegible]
60.	[illegible]	[illegible]	[illegible]
61.	[illegible]	[illegible]	[illegible]
62.	[illegible]	[illegible]	[illegible]
63.	[illegible]	[illegible]	[illegible]
64.	[illegible]	[illegible]	[illegible]
65.	[illegible]	[illegible]	[illegible]
66.			
67.			
68.			
69.			
70.			
71.			
72.			
73.			
74.			
75.			
76.			
77.			
78.			
79.			